ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Երեխայի իմացական հետաքրքրությունների ճանաչողական զարգացման հիմնախնդրի ուսումնասիրության տեսական հիմքերը ձևակերպված են գենետիկական հոգեբանության դպրոցի ներկայացուցիչների կողմից: Այդ դպրոցը գլխավորում են Ժան Պիաժեն, Հանրի Վալլոնը, Լեոնարդ Կոլբերգը, Ջերոմ Բրուները: Երեխայի իմացական գործունեության (որի կազմում, բնականաբար, և իմացական հետաքրքրությունները) զարգացումը Ժ.Պիաժեն դիտարկում է մտածողության տեսության մեջ: Մի շարք գիտափորձերի արդյունքնում նա եկել է այն եզրակացության, որ երեխայի հոգեկան զարգացման փուլերը հանդես են գալիս որպես նրա ինտելեկտի զարգացման փուլեր, որոնք երեխան աստիճանաբար անցնում է իր անձի և վարքի ձևավորման ընթացքում: Հոգեկան զարգացման ընթացքում ըստ Ժ.Պիաժեյի տեղի է ունենում երեխայի ադապտացիան շրջապատող միջավայրին:

Քննարկելով երեխայի ինտելեկտի և ադապտացիայի կապը, Ժ.Պիաժեն ընդգծում է, որ ադապտացիան պասիվ պրոցես չէ, այլ օրգանիզմի ակտիվ փոխազդեցություն միջավայրի հետ: Այդպիսի ակտիվությունը հանդես է գալիս որպես զարգացման անհրաժեշտ պայման, քանի որ այդ սխեման մարդուն չի տրվում պատրաստի վիճակում, այն չկա և շրջապատող աշխարհում, այլ մշակվում է միջավայրի հետ մարդու ակտիվ փոխազդեցության պրոցեսում: Հետազոտությունները Ժ.Պիաժեին բերել են այն եզրահանգման, որ մինչև 7 տարեկանը երեխաները գտնվում են նախագործընթացային փուլում, այսինքն նրանց մոտ սկսում են ձևավորվել ներքին մտածական պրոցեսները, բայց նրանք դեռևս կատարյալ չեն: Միայն յոթ տարեկան հասակում երեխաները սկսում են ճիշտ լուծել առաջադրվող խնդիրները, բայց նրանց տրամաբանական մտածողությունը կապված է կոնկրետ խնդիրների հետ, այն դեպքում, երբ ձևական տրամաբանությունը նրանց մոտ նոր է սկսում զարգանալ [4]:

Հենրի Վալլոնը գտնում է, որ երեխայի հոգեկան զարգացումը իրենից ներկայացնում է փուլերի հաջորդականության փոփոխություն, որի հիմքում ընկած է հոգեկանի կառուցվածքային վերակառուցումը և որի պարագայում վերակառուցվում են ոչ միայն առանձին հոգեկան պրոցեսները (օրինակ, առաջատար դերը շարժումից անցնում է մտածողությանը), այլ երեխայի անձը ամբողջովին: Արտաքին աշխարհի զարգացնող ներգործությունը երեխայի

կողմից բեկվում է նրա ապրումներում, այսինքն երեխայի կապը մեծերի աշխարհի և առարկաների աշխարհի հետ միջնորդավորվում է հույզերով: Ընդհանրացնելով, Հ.Վալլոնը, ընդգծում է, որ երեխան ընդունակ է դառնում հոգեկան կյանքի համար հույզերի շնորհիվ, որոնք միացնում են երեխաների ներքին և արտաքին աշխարհը[4]:

Երեխաների հոգեկանի փուլային զարգացման գաղափարը ելակետային է դարձել նաև Լ.Կոլբերգի հետազոտությունների համար, որի գլխավոր ձեռքբերումը դարձել է երեխաների բարոյական զարգացման տեսությունը: Ըստ հեղինակի երեխայի հոգեկան զարգացման մեջ ոչ միայն_շրջապատող աշխարհի մասին գիտելիքների և բարոյական չափանիշների ձևավորումն է, այլև հուզական զարգացումը, սեռային նույնականության զարգացումը կապված են իմացական պրոցեսների հետ: Իր փորձարարական հետազոտություններում Լ.Կոլբերգը երեխաների առջև խնդիր է դրել գնահատել ընտրության հիմնախնդրի բարոյական կողմը և վերլուծել նրանց դատողությունների համակարգը [4]:

Մանկան հոգեբանության մեջ երեխաների ճանաչողական, իմացական զարգացման նոր օրինաչափությունների բացահայտումը կապվում է ճանաչված ամերիկացի հոգեբան Ջերոմա Բրունեյի հետ: Իր հետազոտություններում հեղինակը առաջին անգամ բացահայտել է թե պահանջմունքներն ու արժեքային կողմնորոշումները ինչպես են ազդում ընկալման գործընթացի վրա: Նա ապացուցել է, որ յուրաքանչյուր երեխա համարժեք մոտեցման դեպքում ուսուցման գործընթացում կարող է տիրապետել ցանկացած առարկայի քանի որ բոլոր երեխաները ունեն հետաքրքրություն և ուսումնական խնդիրներ լուծելու ցանկություն: Երեխաների իմացական ակտիվության իջեցումը տեղի է ունենում բարդ խնդիրների հետ բախման ժամանակ:

Կատարելով մի շարք հետազոտություններ ուսուցմանը երեխաների նախապատրաստելու հոգեբանական հիմնախնդրի շուրջ Ջ.Բրունները հավաստում է, որ մտավոր ձևավորման տեսակետից յուրաքանչյուր փուլում երեխան հատկանշվում է աշխարհը տեսնելու եղանակի և իր համար բացատրելի դարձնելու բնութագրման առանձնահատկություններով: Այս կամ այն առարկան երեխային ուսուցանելու խնդիրը յուրաքանչյուր տարիքում կայանում է նրանում, որպեսզի ներկայացվի տվյալ առարկայի կառուցվածքը երեխայի կողմից աշխարհը տեսնելու, ճանաչելու եղանակի հասկացությունների միջոցով: Ջ.Բրունների, Ժ.Պիաժեյի և այլոց հետազոտություններով ապացուցված է, որ կարելի է առանձնացնել երեխայի մտավոր զարգացման երեք փուլեր: Նախադպրոցական տարիքային փուլում երեխայի մտավոր զարգացումը հիմնականում ամփոփվում է (կայանում է) փորձի և գործողության միջև կապի հաստատման մեջ: Երեխայի հետաքրքրությունը հանգեցվում է առարկաների հետ

գործողություններ կատարելուն և գործողության միջոցով աշխարհին տիրապետելուն:

Երեխայի մտածողության զարգացման երկրորդ փուլը սկսվում է դպրոց հաճախելու հետ մեկտեղ և կոչվում է կոնկրետ օպերացիաների փուլ: Խոսքը ոչպարզ գործողությունների մասին է խոսքը, ինչը նախորդ փուլում էր: Այդ գործունեությունը իրականանում է անմիջապես արտաքին աշխարհի առարկաների հետ մոնիպուլյացիաներ կատարելու միջոցով, կամ թե միջնորդավորված ձևով սիմվոլների (խորհրդանիշների) հետ օպերացիաներ կատարելու միջոցով, որոնք ներկայացնում են մեր գիտակցության մեջ առարկաները և դրանց միջև հարաբերությունները:

«Ընդհանուր հոգեբանության խնդիրները» աշխատության մեջ Ս.Լ. Ռուբինշտեյնը գրում է, որ երբ հանգամանքների ճնշման տակ ինչ-որ բան մարդու համար ծեռք է բերում որոշակի նշանակություն այն նրա մեջ կարող է հետաքրքրություն առաջացնել: Ըստ մտածողության ընթացքի Ս.Լ. Ռուբինշտեյնը մի կողմից ընդունում է, որ առարկան է իր նկատմամբ առաջացնում հետաքրքրություն, իսկ մյուս կողմից հետաքրքրությունը դրդում է գործունեության որպես սկզբապատճառ:

Արդեն նշեցինք, որ անվանի շատ հոգեբաններ իմացական հետաքրքրությունը ընդունում են որպես իմացական գործունեության դրդապատճառ: Հոգեբանության պատմության և տեսության հիմնադիրներից ոմանք, դիցուկ Ա.Վ.Պետրովսկին և Մ.Գ.Յարոշևսկին, ավելի լայն ֆունկցիա են վերագրում դրդապատճառին: Նրանք նշում են, որ ինքն իրեն դրդապատճառը չի կարող համարժեքորեն բացատրվել անբաժան կապերից և այնպիսի դետերմինանտների համակարգի մեջ նախնական ընդգրկվածությունից դուրս, որոնցից են հարաբերությունը (վերաբերմունքը), գործողությունները, անձնավորությունները, որոնք կառուցում են հոգեկան կյանքի ընդհանուր հիմքը: Դրդապատճառի «ծառայությունը» այս կյանքում կանխորոշված է նրանով, որպեսզի վարքին հաղորդեն իմպուլս և ուղղվածություն, պաշտպանելով վարքի էներգետիկ լարվածությունը նպատակին հասնելու ողջ ճանապարհին:

Ա.Ա.Ռեանի և Յա.Լ.Կոլմինսկու հետազոտությունների տեսական վերլուծությունները ցույց են տվել, որ իմացական դրդապատճառների երեխայի ուսումնական գործունեության վրա ազդեցության ցածր մակարդակը ուսուցման առաջին և երկրորդ տարվա համար դպրոցում օրինաչափ է: Նման դրդապատճառները ձևավորվում են ուսումնական պրոցեսում և դրա համար պատասխանատվությունը առաջին հերթին ընկնում է մանկավարժի և ծնողների վրա: Բացի այդ, հեղինակների կողմից հաստատված է, որ ուսումնական մոտիվացիայի վրա չի տարածվում Յերքս-Դոդսոնի հայտնի օրենքը: Ըստ այդ

օրենքի ինչքան բարձր է մոտիվացիան, այնքան բարձր է գործունեության արդյունավետությունը: Բայց ուղիղ կապը պահպանվում է մինչև որոշակի սահմանը, եթե մինչ որոշակի օպտիմալ մակարդակի հասնելը մոտիվացիայի ուժը շարունակվում է ավելանալ, ապա գործունեության արդյունավետությունը սկսում է ընկնել: Հետևաբար, անգամ իմացական մոտիվացիայի մշտապես աճող ուժը չի բերում ուսումնական գործունեության արդյունավետության իջեցմանը:

Ընդհանրացնելով իր կողմից կատարված մի շարք հետազոտությունները Ա.Ա.Ռեանը ընդգծում է, որ կրտսեր դպրոցականներին ուսումնական գործունեությանն դրդող դրդապատճառների համակարգում առանձնացվում են երկու կարգի՝ իմացական և սոցիալական դրդապատճառներ: Ինացական դրդապատճառները ծնվում են ուսումնական գործունեությամբ և անմիջականորեն կապված են ուսման բովանդակության և պրոցեսի հետ: Սոցիալական դրդապատճառների կազմում կարելի է առանձնացնել այնպիսիները, ինչպիսին են «լինել աշակերտ» կարգավիճակային դրդապատճառը (բնորոշ միայն դպրոցում ուսուցման առաջին դասարանի համար), լավ գնահատական ստանալու դրդապատճառը, աշակերտական կոլեկտիվում սեփական տեղը գրավելու, հասակակիցների վրա իշխելու և նրանց կողմից ճանաչվելու դրդապատճառը և այլն:

Դպրոցական ուսուցմանը նախադպրոցականների հոգեբանական պատրաստականության գաղափարը առաջինը զարգացրել է անվանի հոգեբան Լ.Ս.Վիգոտսկին: Ըստ այդ գաղափարի պատրաստությունը դպրոցական ուսուցմանը երեխայի ինտելեկտուալ զարգացման տեսանկյունից կայանում է ոչ միայն քանակական պատկերացումների պաշարի, որքան ինտելեկտուալ պրոցեսների զարգացման մակարդակի մեջ, այսինքն մանկան մտածողության որակական առանձնահատկությունների մեջ: Ըստ այս տեսանկյան լինել պատրաստ դպրոցական ուսուցմանը նշանակում է հասնել մտավոր պրոցեսների զարգացման որոշակի մակարդակի: Այսինքն երեխան պետք է կարողանա առանձնացնել էականները շրջապատող իրականության երևույթներում, կարողանա համեմատալ դրանք, գտնել երևույթների պատճառները, անել եզրահանգումներ:

Երեխայի անձի ձևավորման տեսության հիմնադիր Լ.Ի.Բոժովիչը [4] քննարկելով դպրոցական ուսուցմանը երեխայի հոգեբանական պատրաստության խնդիրը նշում է, որ այն երեխայից պահանջում է ոչ միայն ինտելեկտուալ զարգացման որոշակի մակարդակ, այլև իրականության նկատմամբ որոշակի իմացական վերաբերմունք, իմացական հարաբերության զարգացման մակարդակ, այսինքն նրա իմացական հետաքրքրությունների զարգացման որոշակի մակարդակ:

Քննարկելով ավագ նախադպրոցականների ընդհանուր հոգեբանական զարգացման նոր միջավայրին նրանց հարմարման և ապահարմարվողականության (դեզադապտացիայի) հարցերը հայ հոգեբան Ա.Սարգսյանը (ԱՄՆ քաղաքում) նշում է, որ հոգեբանական պատրաստությունը դպրոցին կապված է ինչպես 6-7 տարեկան երեխաների իմացական հետաքրքրությունների, ընդունակությունների, այնպես էլ անձնային, հուզական որակների զարգացման հետ: Դրանց ոչ բավարար լինելու պարագայում կարող են ի հայտ գալ չափազանց նյարդային լարվածություն, անվստահություն, սեփական վերաբերմունք ուսումնական գործունեության նկատմամբ: Ա.Ա.Սարգսյանը տարբերակում է պատրաստության հետևյալ տեսակները. հոգեբանական (որը ներառում է երեխայի անձնային, կամային և բանական պատրաստականությունը) անձնային պատրաստականությունը (որը նշանակում է դպրոց հաճախելու պահին նոր սոցիալական դիրքը ընդունելու պատրաստություն), սոցիալ- հոգեբանական (մեծահասակների կյանքին մասնակցելու ցանկություն), կամային պատրաստություն (կապված նպատակադրման և այն իրականացնելու հետ) և ինտելեկտուալ (կամ բանական) պատրաստություն (որը նշանակում է մտածողության, հիշողության և ուշադրության զարգացման անհրաժեշտ մակարդակ), որը պետք է դրսևորվի կապակցված խոսքի և վերլուծելու կարողության միջոցով:

Երեխայի վրա վերջինիս տոտալ ներգործությունը կամ բերում է ընտելացման, ինչը իմացության պրոցեսը դարձնում է անհետաքրքիր նրա համար, կամ միանգամայն օրինաչափորեն ծագում է հետադարձ ռեակցիան, երեխան ձգտում է հակազդեցության և մանկավարժական ներգործության չընդունման:

Ընդհանրացնելով հայեցակետային և տեսական դրույթները, որոնք ընկած են հետազոտության տեսամեթոդաբանական հիմքում, նշենք, որ նախադպրոցական տարիքում հոգեբանության քննարկվող բնագավառը դեռևս կարոտ է հիմնարար հետազոտությունների արդի պայմաններում, այնուհետև նախադպրոցական իմացական հետաքրքրությունների և դպրոցին նրանց հոգեբանական ադապտացիայի հարաբերակցության հարցերը ճշտելու և իմաստավորելու կարիք ունեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Божович Л.И. Личность и ее формирование в детском возрасте. Зид. Просвешение. М., 1968
2. Брунер Дж. Психология познания. М. Прогресс, 1977
3. Дошкольная педогогика М., Педогогика, 1988
4. Марциновская П.Д. История детской психологии. М., Владос, 1998
5. Սարգսյան Ա. Երեխայի հոգեբանական պատրաստությունը. դպրոցական ուսուցումը. Երևան 1998
6. Рубинштейн С.Л. Проблемы обшей психологи М., Педогогика, 1976